


Masoneilan

a Baker Hughes business

Սերիա 35002 Camflex™ II

Պտտովի կարգավորիչ փական

Շահագործման ձեռնարկ (Խմբ. G)



ԱՅՍ ՅՐԱՅԱՆՁՆԵՐԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ/ՕՊԵՐԱՏՈՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ Ի ԼՐՈՒՄՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ: ԶԱՆԻ ՈՐ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՏԱՐԲԵՐՎԵԼ, BAKER HUGHES-Ը (ԵՎ ԻՐ ԴՈՒՍՏՐ ՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ) ՉԻ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ ԽԻՍՏ ՊԱՀՊԱՆԵԼ ՈՐՈՇԱԿԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ, ԱՅԼ ՄԻԱՅՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԱՌԱՔՎՈՂ ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ:

ՏՎՅԱԼ ՅՐԱՅԱՆՁՆԵՐԻ ՆԵՐՔՈՒ ԵՆԹԱԴՐՎՈՒՄ Է, ՈՐ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐՆ ԱՐԴԵՆ ՈՒՆԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՎԵՐԱՑՈՒՄ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՎՏԱՆԳԱԿՈՐ ՄԻՋԱԿԱՅՐՈՒՄ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՄԱՍԻՆ: ՈՒՍՏԻ ԱՅՍ ՅՐԱՅԱՆՁՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՄԵԿՆԱԲԱՆՎԵՆ ԵՎ ԿԻՐԱՌՎԵՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԱՅԼ ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ:

ՉԻ ԵՆԹԱԴՐՎՈՒՄ, ՈՐ ԱՅՍ ՅՐԱՅԱՆՁՆԵՐԸ ՉԵՆ ՆԵՐԱՌՈՒՄ ԲՈԼՈՐ ՄԱՆՐԱՄԱՆՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐՔԱԿՈՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՁԵՎԱՓՈԽԿԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱԿՈՐ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԱՊՎԱԾ ԼԻՆԵԼ ՏԵՂԱԴՐՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԵՏ: ԵԹԵ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԿԱՄ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԿԱՄ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՈՐՈՇԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ, ՈՐՈՆՔ ԱՅՍ ԲԱՎԱՐԱՐ ՉԱՓՈՎ ՉԵՆ ՆԵՐԿԱՅԱՑԾՎԱԾ, ԱՊԱ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԴԻՍԵԼ BAKER HUGHES ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ:

BAKER HUGHES ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ/ՕՊԵՐԱՏՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԽԻՍՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԱԾ ԵՆ ՍԱՐՔԱԿՈՐՄԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՀՄԱՆԱԳՐԻ ՀՍՏԱԿ ԱՐՏԱՀԱՅՏԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐՈՎ: ԱՅՍ ՅՐԱՅԱՆՁՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՉԻ ԵՆԹԱԴՐՈՒՄ, ՈՐ BAKER HUGHES-Ը ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԿԱՄ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է ՈՐԵՎԷ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՍԱՐՔԱԿՈՐՄԱՆ ԿԱՄ ԴՐԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏԱՄԲ:

ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ/ՕՊԵՐԱՏՈՐԻՆ ԲԱՑԱՌԱՊԵՍ ՄՈՆՏԱԺՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ/ԿԱՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԱՅՍ ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒՄԸ ԱՌԱՆՑ BAKER HUGHES ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ:

Բովանդակություն

Անվտանգության տեխնիկայի վերաբերյալ տեղեկատվություն.....	1
1. Ներածություն.....	2
2. Ընդհանուր տեղեկություններ.....	2
3. Աշխատանքի սկզբունքը	2
4. Ապափաթեթավորում	3
5. Մոնտաժում.....	3
6. Օդի մատակարարման խողովակաշար.....	4
7. Շահագործման հանձնում.....	4
8. Քանդում.....	5
8.1 Շարժաբերի հանում պատյանի ենթահանգույցից (տես նկարներ 16 և 17).....	5
8.2 Շարժաբերի ամբողջական քանդում.....	5
8.3 Փականի պատյանը (տես նկարներ 4 և 16)	6
9. Տեխնիկական սպասարկում.....	8
9.1 Մեմբրանի փոխարինում (տես նկարներ 16 և 17).....	8
9.2 Պատյանի հանգույցի ներքին մասեր.....	9
9.3 Լայնակի հանգույցը (տես նկարներ 16 և 17).....	10
10. Վերահավաքման ընթացակարգեր	10
10.1 Մեմբրանային զսպանակային շարժաբեր	10
10.2 Պատյանի ենթահանգույցի վրա գտնվող մեմբրանային զսպանակային շարժաբեր (տես նկարներ 16 և 17)	10
10.3 Թափանիվի վերահավաքում	11
10.4 Սահմանափակիչի վերահավաքում.....	11
10.5 Փականի պատյանի վերահավաքում (տես նկար 16).....	11
10.6 Թամբիկի օղակի հավասարեցում.....	13
10.7 DVD թիթեղի վերահավաքում.....	13
11. Շարժաբերի գլանաձողի կարգավորում (տես նկարներ 16 և 17).....	13
12. Պատյանի դիրքի փոխում.....	15
13. Շարժաբերի գործողության փոխում	15
14. Ձեռքի շարժաբերի տարբերակ	17
14.1 Քանդման ընթացակարգ.....	17
14.2 Տեխնիկական սպասարկում.....	17
14.3 Վերահավաքման ընթացակարգ.....	17
Հավելված A. Տեղեկատվություն Մաքսային միության մասին	25

Անվտանգության տեխնիկայի վերաբերյալ տեղեկատվություն

Կարևոր է: Կարդացեք մոտաժելուց առաջ

Այս հրահանգները անհրաժեշտ տեղերում պարունակում են «ՎՏԱՆԳԱՎՈՐ Է», «ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ» և «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» նշանները՝

անվտանգության նախագգուշացումների կամ այլ կարևոր տեղեկատվության համար: Ուշադիր կարդացեք հրահանգները՝ նախքան կարգավորող փականի մոտաժումը և տեխնիկական սպասարկումը: «ՎՏԱՆԳԱՎՈՐ Է» և «ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ» նշաններով նշված վտանգավոր գործոնները կապված են անձնակազմի կողմից վնասվածքներ ստանալու հավանականության հետ: «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» նշանով նշված վտանգավոր գործոնները կապված են սարքավորումների կամ գույքի վնասման հավանականության հետ: Վնասված սարքավորման շահագործումը որոշակի աշխատանքային պայմաններում կարող է հանգեցնել տեխնոլոգիական համակարգի արտադրողականության նվազմանը, ինչը կարող է հանգեցնել անձնակազմի կողմից վնասվածքներ ստանալուն կամ մահվան: Անվտանգության ապահովման համար շահագործման ընթացքում անհրաժեշտ է բոլոր «ՎՏԱՆԳԱՎՈՐ Է», «ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ» և «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ» նշանների պահանջների լիարժեք պահպանումը:



Սա վտանգի նախագգուշացման խորհրդանիշ է: Այն գգուշացնում է ձեզ վնասվածքներ ստանալու հնարավոր վտանգի մասին: Պահպանեք այս խորհրդանիշից հետո նշված անվտանգության բոլոր կանոնները՝ հնարավոր վնասվածքներից կամ մահից խուսափելու համար:



DANGER

Ցույց է տալիս հնարավոր վտանգավոր իրավիճակ, որը չխուսափելու դեպքում կարող է հանգեցնել մահվան կամ լուրջ վնասվածքների:



AVERTISSEMENT

Ցույց է տալիս հնարավոր վտանգավոր իրավիճակ, որը չխուսափելու դեպքում կարող է հանգեցնել լուրջ վնասվածքների:



MISE EN GARDE

Ցույց է տալիս հնարավոր վտանգավոր իրավիճակ, որը չխուսափելու դեպքում կարող է հանգեցնել թեթև կամ միջին ծանրության վնասվածքների:

MISE EN GARDE

Առանց վտանգի նախագգուշացման նշանի օգտագործման դեպքում ցույց է տալիս հնարավոր վտանգավոր իրավիճակ, որը չխուսափելու դեպքում կարող է հանգեցնել գույքի վնասման:

Ծանոթագրություն: Ուշադրություն է հրավիրում կարևոր փաստերի և պայմանների վրա:

Այս ձեռնարկի մասին

- Այս ձեռնարկում ներկայացված տեղեկատվությունը կարող է փոփոխվել առանց նախնական ծանուցման:
- Սույն ձեռնարկում պարունակվող տեղեկատվությունը ամբողջությամբ կամ մասնակի վերարտադրման կամ պատճենահանման ենթակա չէ առանց Baker Hughes ընկերության գրավոր թույլտվության:
- Այս ձեռնարկում պարունակվող տեղեկատվության վերաբերյալ ցանկացած սխալի կամ հարցի մասին հայտնեք ձեր տեղական մատակարարին:
- Սույն հրահանգները կազմված են հատուկ 35002 Camflex II սերիայի փականների համար և չեն վերաբերում արտադրանքի այս շարքում չներառված այլ փականներին:

Ծառայության ժամկետը

35002 Camflex II փականների ծառայության ակնկալվող ժամկետն ավելի քան 25 տարի է: Արտադրանքի ծառայության ժամկետը առավելագույնս երկարացնելու համար շատ կարևոր է իրականացնել տարեկան ստուգում, պլանավորված տեխնիկական սպասարկում և ապահովել պատշաճ տեղադրում՝ արտադրանքի վրա չնախատեսված ծանրաբեռնումներից խուսափելու համար: Ծահագործման որոշակի պայմանները նույնպես ազդում են արտադրանքի ծառայության ժամկետի վրա: Կիրառման որոշակի ոլորտի հետ կապված հարցեր առաջանալու դեպքում՝ նախքան տեղադրելը խորհրդակցեք արտադրող գործարանի հետ:

Երաշխիք

Baker Hughes ընկերության կողմից վաճառվող արտադրանքները երաշխավորված են, որ դրանք գերծ կլինեն նյութի և աշխատանքի թերություններից մեկ տարվա ընթացքում առաքման օրվանից, պայմանով, որ այդպիսի ապրանքներն օգտագործվում են Baker Hughes ընկերության կողմից առաջարկվող կիրառման եղանակներին համապատասխան: Baker Hughes ընկերությունը իրավունք է վերապահում առանց նախնական ծանուցման դադարեցնել ցանկացած արտադրանքի արտադրությունը կամ փոխել արտադրանքի նյութերը, կառուցվածքը և տեխնիկական բնութագրերը:

Ծանոթագրություն: Մոտաժելուց առաջ.

- Փականը պետք է տեղադրեն, շահագործման հանձնեն և սպասարկեն համապատասխան վերապատրաստում անցած որակավորված և իրավասու մասնագետները:
- Չարակից բոլոր խողովակաշարերը պետք է մանրակրկիտ լվացվեն՝ համակարգի մեջ լցված օտար նյութերը հեռացնելու համար:
- Ծահագործման որոշ պայմաններում վնասված սարքավորման օգտագործումը կարող է հանգեցնել համակարգի արտադրողականության նվազմանը, ինչը կարող է հանգեցնել վնասվածքների կամ մահվան:
- Տեխնիկական բնութագրերի, կառուցվածքի և օգտագործվող բաղադրիչների փոփոխությունները չեն հանգեցնում սույն ձեռնարկի վերանայման, եթե այդ փոփոխությունները չեն ազդում արտադրանքի գործառնայի և բնութագրերի վրա:

1. Ներածություն

Հետևյալ հրահանգները մշակված են օգնելու սպասարկման անձնակազմին՝ Camflex II փականի տեխնիկական սպասարկման աշխատանքների մեծ մասը կատարելիս, և դրանց խիստ կատարման պայմանով կրճատում են տեխնիկական սպասարկման ժամանակը:

Baker Hughes-ի բ.արձր որակավորում ունեցող սպասարկման ճարտարագետները միշտ պատրաստ են օգնելու փականների և դրանց բաղադրիչների գործարկման և կարգավորման, տեխնիկական սպասարկման ու վերանորոգման հարցում: Բացի այդ, հաճախորդների սպասարկման ու հսկիչ և չափիչ սարքավորումների հարցերով զբաղվող անձնակազմի համար անցկացվում են ուսուցման պլանային ծրագրեր մեր կարգավորող փականների և հսկիչ և չափիչ սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և կիրառման վերաբերյալ: Տվյալ ծառայությունները կարելի է պատվիրել Baker Hughes ընկերության ներկայացուցչության միջոցով կամ տարածաշրջանային գրասենյակում: Տեխնիկական սպասարկում կատարելիս, օգտագործեք միայն Masoneilan-ի պահեստամասերը: Պահեստամասերը կարելի է ստանալ տեղական ներկայացուցչությունում կամ տարածաշրջանային գրասենյակում: Պահեստամասեր պատվիրելիս, միշտ նշեք վերանորոգվող սարքավորման **ՄՈՂԵԼԸ և ՍԵՐԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԸ**:

2. Ընդհանուր տեղեկություններ

Մոնտաժման և տեխնիկական սպասարկման վերաբերյալ այս հրահանգները վերաբերվում են 1"-ից մինչև 12" չափի (Պտ չափերը՝ 25-ից մինչև 300) փականներին՝ ճշման բոլոր **35002 սերիայի համարակազմի համակարգ**

անվանական նշանակությամբ և


անվանատիկ շարժաբեքներով: Փականի մոդելի համարը, չափը և անվանական արժեքը նշված են գործարանային ցուցանակի վրա: Փականի մոդելը որոշելու համար տես նկար 1:

3. Աշխատանքի սկզբունքը


Camflex II փականի հայեցակարգը հիմնված է արտակենտրոնարեն պտտվող գնդաձև խցանի վրա, որը տեղակայված է ազատ հոսք ունեցող պատյանի մեջ: Խցանի նեցուկային մակերեսը ճկուն լծակներով միացված է կունդին, որը շարժվում է պտտվող լիսեռի երկայնքով: Խցանն ազատ ինքնակենտրոնանում է լիսեռի առանցքի վրա: Խցանի և թամբիկի միջև հոսալի խցվածքը ապահովում է խցանի ելունների առաձգական ձևափոխմամբ: Երեսակով թամբիկի օղակը ամրացված է փականի պատյանի մեջ պարուրակային սևեռիչով:

Խցանը և լիսեռը լծակով պտտվում են 50°-ով, որը կապված է զսպանակավոր ծալքավորված մեմբրան ունեցող հզոր շարժաբեքի հետ:

Հոծ սկավառակով թափանիվը և վեցանիստ արգելակող մանեյկ (ընտրովի) տեղադրված են լայնակի վրա՝ շարժաբեքի դիմաց, և կարող են օգտագործվել փականը ձեռքով կառավարման համար կամ որպես սահմանափակիչ: Լայնակի հակառակ կողմում գտնվող պարուրակային անցքը խցանով փակված է, բայց կարող է ունենալ դարձակամուտ գլխիկով լրացուցիչ պտուտակ և սևեռամանեյկ, որոնք կարող են տեղադրվել որպես սահմանափակիչ այլ ուղղության համար կամ թափանիվի հետ համատեղ՝ ընտրված դիրքում փականը ամրացնելու համար:



Նկար 1




Նկար 2

Ճանութագրություն: Camflex II փականի թափանիվը նախատեսված է միայն արտակարգ գործողությունների համար:

Որպես կանոն, շարժաբեղը տեղադրվում է օդային բեռով խցանի վրա դիսամիկ ոլորող մոմենտին հակազդելու համար: Նկար 2-ում հոսքի ուղղությունը հակված է բացելու խցանը, իսկ շարժաբեղը կողմնորոշված է փակելու այն օդի ճնշման բարձրացմամբ: Շարժաբեղի զսպանակի ուժը օգնում է փոխել խցանի վրա ազդող ուժերի հավասարակշռությունը՝ օդի մատակարարման խափանման դեպքում փականը բացելու համար: Եթե օդի մատակարարման խափանման դեպքում փականը պետք է փակվի, ապա պատյանը գծի մեջ պետք է շրջվի այնպես, որ հոսքը հակված լինի փակելու խցանը, իսկ շարժաբեղի դիրքը պետք է փոխվի հակառակ դիրքի:

Camflex II փականն ունի հոսքի փոփոխված գծային բնութագիր, որը նույնն է հոսքի ցանկացած ուղղության համար: Այն կարող է հեշտությամբ վերածվել հավասարազոր 4700 սերիայի, 8000 սերիայի՝ փականը դիրքավորիչով կամ SVI Smart Valve խելացի փականի ինտերֆեյսով լրացնելու դեպքում: ՓԱԿԱՆԸԻ 0,4 և 0,6 նվազեցրած գործակիցները հասանելի են բոլոր չափերի փականների համար: 0,4 գործակցի թողունակությունը կազմում է փականի անվանական թողունակության 40%-ը և հավասար է 60%-ի 0,6 գործակցի դեպքում: 0,1 և 0,2 գործակիցները հասանելի են 1" փականի համար (Պտ 25):

Camflex II փականի ունակությունը դիմակայելու տեխնոլոգիական միջավայրի ջերմաստիճանների լայն միջակայքին պայմանավորված է փականի երկար միաձույլ կափարիչով: Դա ապահովում է ճառագայթման բավարար մակերես՝ խցուկի ջերմաստիճանը նորմալացնելու համար: Այսպիսով, ՏՖԷ արամիդ մանրաթելից ինքնաքսվող լցումը օգտագործման դեպքում, փականը դիմանում է -196°C -ից մինչև $+400^{\circ}\text{C}$ (-321°F -ից մինչև $+752^{\circ}\text{F}$) ջերմաստիճանների: Փականը մեկուսացնելիս մի մեկուսացրեք փականի կափարիչը (տես նկար 3):



Նկար 3

4. Ապափաթեթավորում

Փականը փաթեթավորումից հանելիս պետք է զգույշ լինել՝ պարագաները և բաղադրիչները չվնասելու համար: Որևէ խնդիր առաջանալու դեպքում դիմեք ձեր ներկայացուցչին կամ տարածաշրջանային գրասենյակ:

Ճանութագրություն: Փոխադրման հարմարության և վնասը կանխելու համար մեմբրանային զսպանակային շարժաբեղով փականները առաքվում են թափանիվը հանված: Թափանիվի հավաքման ընթացակարգերը տես 10.3 բաժնում:

5. Մոնտաժում

Camflex II հավաքվել է արտադրող գործարանում՝ հոսքի ուղղության և շարժաբեղի աշխատանքի ռեժիմի հետ կապված կոնկրետ հրահանգներին համապատասխան: Փականը պետք է տեղադրվի այնպես, որ աշխատանքային միջավայրը հոսի փականի միջով՝ փականի կափարիչի վերևում գտնվող սլաքի (25) նշված ուղղությամբ: Փականի շարժաբեղը պետք է տեղադրվի այնպես, որ այն գտնվի լիտեռի առանցքային գծից բարձր: Փականը գծի մեջ տեղադրելու համար կատարեք հետևյալ գործողությունները.

MISE EN GARDE

Հոսքի ուղղության կամ շարժաբերի աշխատանքի ցանկացած փոփոխությունն պետք է իրականացվի շահագործման սույն ձեռնարկի 7 և 10 բաժիններին համապատասխան: Այս կանոններին չհետևելը կարող է հանգեցնել անձնակազմի կողմից վնասվածքներ ստանալուն և սարքավորումների խափանումների:

USE EN GARDE

Եթե փականը պետք է մեկուսացված լինի, մի մեկուսացրեք փականի կափարիչը:

Ճանութագրություն: Եթե փականն ունի ձեռքի թափանիվ, ապա այժմ այն կարելի է գործարկել:

6. Օդի մատակարարման խողովակաշար

Օդը շարժաբերի մեջ մատակարարվում է մեմբրանի պատյանում առկա 1/4" NPT պարուրակային միացման միջով: Տեսեք նկար 14, որպեսզի որոշեք մատակարարման ճիշտ ճնշումը և փողակի չափը, այնուհետև միացրեք օդի մատակարարման խողովակաշարը:

ISE EN GARDE

Մի գերազանցեք օդի նշված առավելագույն ճնշումը: Դա կարող է հանգեցնել անձնակազմի կողմից վնասվածքներ ստանալուն և սարքավորումների խափանումների:

Ճանութագրություն: Եթե փականն ունի կարգավորիչներ կամ Baker Hughes-ի կողմից առաքվող այլ պարագաներ, ապա պահանջվում են միայն այդ պարագաների միացումներ, քանի որ խողովակաշարը շարժաբերին միացվել է գործարանում: Էլեկտրական պարագաներով հագեցած որոշ փականների համար կարահանջվի համապատասխան լարանցում: Ճիշտ լարանցման համար տես արտադրողի հրահանգները:

7. Շահագործման հանձնում

Փականը ճիշտ տեղադրելուց և և բոլոր այնամատիկ ու էլեկտրական համակարգերը միացնելուց հետո խորհուրդ է տրվում կատարել փականը մեկ աշխատանքային ցիկլ՝ պատշաճ շահագործումն ապահովելու համար: Կատարեք հետևյալ գործողությունները.

A. Դուրս պտտեք թափանիվը (53), որպեսզի այն չխանգարի փականի աշխատանքին, և ձգեք թափանիվի սևեռիչը (52):

Ճանութագրություն: Եթե փականն ունի ընթացքի լրացուցիչ սահմանափակիչ (77), այն սույնպես պետք է անջատվի՝ փականի աշխատանքին խանգարելը բացառելու համար:

B. Շարժաբերի մեջ ստեղծեք օդի պահանջվող ճնշում:

Ճանութագրություն: Փականը պետք է աշխատի սահուն և առավելագույն ճնշման տակ, փականի ցուցիչը (6) պետք է ցույց տա ամբողջական բացում կամ ամբողջական փակում՝ կախված փականի աշխատանքի ռեժիմից:

C. Թուլացրեք օդի ճնշումը և վերադարձրեք փականը նորմալ ռեժիմի:

D. Աստիճանաբար բացեք տեխնոլոգիական գծերը՝ փականը շահագործման հանձնելու համար:

E. Ստուգեք արտահոսքի առկայության առումով: Անհրաժեշտության դեպքում վերանորոգեք:

A. Ստուգեք մոդելի համարը գործարանային ցուցանակի վրա (56)՝ նկար 1-ում նկարագրված համարակալման համակարգի համաձայն, որպեսզի որոշեք փականի աշխատանքի ռեժիմը:

B. Մաքրեք խողովակաշարը և փականը բոլոր օտար նյութերից, ինչպիսիք են եռակցման ցողումը, կիզուկը, յուղը, քսուկը կամ կեղտը: Միջադիրների մակերևույթները պետք է մանրակրկիտ մաքրվեն՝ միացումների հերմետիկությունն ապահովելու համար:

C. Գծի մեջ տեղադրված փականի գնման, տեխնիկական սպասարկման կամ առանց աշխատանքի ընդհատման փականի ապամոնտաժման հնարավորությունն ապահովելու համար, Camflex II փականի երկու կողմից տեղադրեք ձեռքի փակիչ փական՝ բայապսի գծի վրա տեղադրված ձեռքով կառավարվող դրոսեյային փականի հետ:

Ճանութագրություն: Եթե տեղադրված է կցաշուրթային Camflex II և կցաշուրթերի միջև հեռավորությունը որոշվում է ըստ ANSI -ի կամ DIN-ի, գծի կցաշուրթի և փականի պատյանի կցաշուրթի միջև տեղադրվում են խողովակների հատվածներ (միջնաշերտեր): Այնուհետև տեղադրվում և ամրացվում են միջադիրները և փականի հեղույսների միացումները՝ կցաշուրթի և գծի միացումների հեղույսներով ամրացման ստանդարտ չափանիշների կիրառմամբ:

D. Առանց կցաշուրթի փականների դեպքում տեսեք նկար 23 և որոշեք հեղույսների ճիշտ չափը և քանակը, որոնք օգտագործվելու են փականի և կցաշուրթի անվանական արժեքի համապատասխան:

E. Եթե փականը պետք է տեղադրվի հորիզոնական դիրքում, տեղադրեք կցաշուրթի ստորին հեղույսները, որպեսզի ապահովվեք նեցուկ, որը կպահի փականը մյուս հեղույսները տեղադրելու ժամանակ:

F. Տեղադրեք փականը գծի մեջ:

G. Ընտրեք և տեղադրեք ճիշտ միջադիրներ:

Ճանութագրություն: Առաջարկվում են պարուրածն փաթաթված միջադիրներ, որոնք համապատասխանում են շահագործման պայմաններին:

H. Տեղադրեք մնացած կցաշուրթային հեղույսները՝ հետևելով, որ հեղույսները համընկնեն պատյանի վրա գտնվող հատուկ ելունների հետ, որոնք ապահովում են փականի կենտրոնացումը գծի մեջ, ինչպես նաև կանխում պտտումը:

Ճանութագրություն: Որոշ ստանդարտների կցաշուրթի համար միջանցիկ հեղույսային միացումը հնարավոր չէ փականի պատյանի պարանոցի կամ փականի առկայության պատճառով: Կցաշուրթային հեղույսներ տեղադրելու համար փականի պատյանի վրա նախատեսված են ուղղորդիչներ՝ պարուրակային անցքերով կամ կցաշուրթային հեղույսների համար ակոսներով (տես նկար 22):

I. Հավասարաչափ և ամուր ամրացրեք կցաշուրթային պտուտակները:

ISE EN GARDE

Փականի տեխնիկական սպասարկումն անցկացնելուց առաջ միշտ համոզվեք, որ տեխնոլոգիական ճնշումը, օդի ճնշումը և էլեկտրական միացումներն անջատված են, իսկ փականը մեկուսացված է և դրանում ճնշում չկա:

- F. Ցանկության դեպքում թափանցիկ կարելի է օգտագործել որպես սահմանափակիչ: Տեղադրեք այն պահանջվող դիրքում և արգելափակեք:
- G. Եթե օգտագործվում է ընթացքի լրացուցիչ սահմանափակիչ (77), տեղադրեք սևեռամանեկը և ձգեք այն:

8. Քանդում

8.1 Շարժաբերի հանում պատյանի ենթահանգույցից (տես նկարներ 16 և 17)

Փականի ներքին բաղադրիչների տեխնիկական սպասարկումը կամ շարժաբերի և պատյանի դիրքը միմյանց նկատմամբ պահանջում է շարժաբերի և լայնակի հանումը փականից: Փոխադրման հարմարության և վերահավաքման համար՝ 6, 7 և 9 չափի փականների վրա խորհուրդ է տրվում հանել զսպանակային գլանը լայնակից, այնուհետև առանձնացնել լայնակը փականի պատյանից:

ISE EN GARDE

Փականի տեխնիկական սպասարկումից առաջ անհրաժեշտ է մեկուսացնել փականը, թուլացնել տեխնոլոգիական ճնշումը և փակել օդի մատակարարումն ու պնևմատիկ իմպուլսային գիծը դեպի շարժաբեր:

Ճանաչագրություն: Եթե փականը վերահավաքվելու է նույն դիրքում, խորհուրդ է տրվում, որ պատյանի դիրքը լայնակի նկատմամբ և շարժաբերի դիրքը լայնակի նկատմամբ նշաններով նշված լինեն: Դա կհեշտացնի վերահավաքումը:

- A. Անհրաժեշտության դեպքում հանեք փականը գծից:
- B. Հանեք հետևի (29) և առջևի (32) կափարիչները՝ դուրս պտտելով կափարիչի երկու պտուտակները (30):
- C. Հանեք ստորին կափարիչը (11) և զսպանակի գլանի ականոցի կափարիչը (58):
- D. Հանեք կարգավորվող ցուցիչը (88)՝ դուրս պտտելով երկու պտուտակները (89):
- E. Թուլացրեք թափանցիկ սևեռիչը (52) և պտտեք թափանցիկը (53) այնպես, որ այն չխանգարի լծակի շարժին (34):

Ճանաչագրություն: Ընթացքի լրացուցիչ սահմանափակիչով (նկար 17) առաջվող փականների վրա թուլացրեք մանեկը (78) և դուրս պտտեք ընթացքի սահմանափակիչի պտուտակը (77), որպեսզի այն չխանգարի լծակի շարժին (34):

- F. Միացրեք օդային գիծը շարժաբերի սնուցման մուտքի կետին և բեռնման ձեռքի վահանակի կամ օդի կարգավորվող մատակարարման օգնությամբ հաղորդեք օդի բավարար ճնշում շարժաբերի վրա, որպեսզի լծակը տեղափոխվի միջանկյալ դիրք:

ISE EN GARDE

Մի գերազանցեք օգտագործվող շարժաբերի համար նկար 14-ում նշված ճնշումը: Մի օգտագործեք թափանցիկ լծակը տեղափոխելու համար:

Ճանաչագրություն: Եթե փականը պետք է վերահավաքվի նույն հարաբերական դիրքում, ապա խորհուրդ է տրվում նշել լայնակի (33) և լծակի միմյանց նկատմամբ դիրքը (34) փակ վիճակում, որպեսզի հեշտացնել վերահավաքումը և լծակի ու լիսեռի հավասարեցումը՝ փականի պատշաճ աշխատանքն ապահովելու համար: Տես նկար 17:

- G. Հանեք երիթակավոր բույթի սեղմակները (5):
- H. Հանեք երիթակավոր բույթը (7):
- I. Թուլացրեք օդի ճնշումը շարժաբերից, որպեսզի բույթը (35) անջատվի լծակից (34):
Ճանաչագրություն: Եթե փականն ունի դիրքավորիչ, ապա բռունցքը կամ լծակը հանելու համար դիմեք դիրքավորիչի վերաբերյալ համապատասխան հրահանգներին: Այնուհետև անցեք K քայլին:
- J. Հանեք լիսեռի կափարիչը (9)՝ դուրս պտտելով կափարիչի պտուտակը (10):

ISE EN GARDE

Կախված շարժաբերի չափից և քաշից: Չսպանակային գլանը կամ լայնակը հանելիս, խորհուրդ է տրվում օգտագործել բարձրացման և քաշի պահպանման պատշաճ ընթացակարգեր:

- K. Համոզվեք, որ զսպանակային գլանը ճիշտ է ամրացված:
- L. Թուլացրեք և հանեք դարձակամուտ գլխիկով պտուտակները (36) և կանգնեցման տափօղակները (37), այնուհետև հանեք զսպանակային գլանը (38):
- M. Թուլացրեք լծակի դարձակամուտ գլխիկով պտուտակը (49):
- N. Թուլացրեք գամասեղների մանեկները (94) և առանձնացրեք խցուկի կցաշուրթը:
- O. Թուլացրեք գամասեղների մանեկները (27), որպեսզի առանձնացնեք շարժաբերը պատյանի ենթահանգույցից:

Ճանաչագրություն: Ամրացրեք պատյանը, վերցրեք լծակը ու լայնակը և առանձնացրեք դրանք: Լայնակը, լծակը և խցուկի կցաշուրթը հանվում են միաժամանակ: Լայնակն ազատելու համար, հնարավոր է, կարիք առաջանա թակելու դրան փափուկ մուրճով:

8.2 Շարժաբերի ամբողջական քանդում

Camflex II փականի վրա օգտագործվող մեմբրանային զսպանակային շարժաբերը, նախագծվել է հիմնականում որպես Եժան, չփոխարինելի տարր, ուստի խորհուրդ չի տրվում այն քանդել: Սակայն որոշ դեպքերում և ծայրահեղ հանգամանքներում կարող է պահանջվել դրա քանդումը: Կատարեք հետևյալ գործողությունները.

- A. Եթե շարժաբերը չի հանվել պատյանից, անցեք 9.1 A. - 9.1 L կետերին:
- B. Թուլացրեք սևեռամանեկը (46), այնուհետև հանեք պահանգը (35) և սևեռամանեկը (46):
- C. Թուլացրեք և հանեք դարձակամուտ գլխիկով պտուտակը (41) և հանեք մեմբրանի պատյանը (42) և մեմբրանը (40):

- D. Խորը գլխիկի օգնությամբ թուլացրեք և հանեք սևեռամանեկը (45) և տաթօղակը (44):
- E. Հանեք միացը (43) և զսպանակը (39) և զննեք բոլոր բաղադրիչները:
- F. Անցեք բաժին 10.2 վերահավաքելու համար:

8.3 Փականի պատյանը (տես նկարներ 4 և 16)

Camflex II փականի ներքին բաղադրիչների սպասարկման կարիքը կարող է հեշտությամբ որոշվել, քանի որ թամբիկի օղակը և խցանը տեսանելի են դառնում փականը գծիծ հանելիս: Թեև կարելի է որոշել, որ թամբիկի օղակը փոխարինման կարիք չունի, պետք է նշել, որ նոր խցանը և թամբիկի օղակը պետք է կիսահողկված լինեն միմյանց, ինչը պահանջում է քանդել պատյանը: Խորհուրդ է տրվում փոխարինել թամբիկի օղակը և խցանը, եթե այդ բաղադրիչներից մեկը վնասվել է շահագործման ընթացքում:

Շարժաբերը պատյանից հանելուց հետո փականը քանդեք հետևյալ կերպ.

ISE EN GARDE

Փականի տեխնիկական սպասարկումն անցկացնելուց առաջ անհրաժեշտ է մեկուսացնել փականը և թուլացնել տեխնոլոգիական ճնշումը:

- A. 35002 SB տարբերակների դեպքում (հանուլի կափարիչ) հանեք պատյանից կափարիչի մանեկները (104) և հանեք կափարիչը (102) խցուկի (17) և խցուկի ականոցի (15) հետ միասին՝ որպես մեկ հանգույց: Անցեք D քայլին:
- B. Հանեք խցուկի ականոցը (15):
- C. Հանեք ապահովիչ բույթը(16):

ISE EN GARDE

Ապահովիչ բույթը նախատեսված է լիսեռի դուրս գալը կանխելու համար, երբ լայնակը հանվում է այն ժամանակ, երբ փականը դեռ գտնվում է ճնշման տակ: Փականի ներքին բաղադրիչները հնարավոր չէ հանել առանց ապահովիչ բույթը նախապես հանելու:

- D. Զաշեք լիսեռից (19), որպեսզի դուրս հանեք այն:

Ծանոթագրություն: խցանից լիսեռը հանելու դժվարությունը երբեմն առաջանում է հիմնականում խցանի փորակների և լիսեռի միջև նստվածքների ավելորդ կուտակման պատճառով: Հանելը հեշտացնելու համար տաքություն մատակարարեք դեպի խցանի լիսեռի ներքին անցքը՝ օգտագործելով հետևյալ եղանակներից մեկը:

ISE EN GARDE

Ջեռուցման սարքեր օգտագործելիս, պահպանեք անվտանգության կանոնները: Պետք է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատանքային միջավայրի դյուրավառությունը և թունավորությունը և ձեռնարկվեն համապատասխան նախագուշակական միջոցներ:


Եթե դժվար է հանել լիսեռը, տեղադրեք լծակը (34) լիսեռի փորակի ծայրի վրա (19), ձգեք լծակի դարձակամուտ գլխիկով պտուտակը (49) և մուրճի օգնությամբ թակեք լծակին (34) լիսեռին հնարավորինս մոտ և հանեք լիսեռը (19):

Ծանոթագրություն: Եթե լիսեռը հնարավոր չէ հանել ձգված լծակին հարվածելիս, ապա օգտագործեք

այլընտրանքային հանման մեթոդը, որը ներկայացված է նկար 20-ում: Օգտագործելով համապատասխան չափի և երկարության խողովակի նիպելը և շրջելով խցուկի կցաշուրթն ու գամասեղների մանեկները, ինչպես ցուցադրված է նկարում, լիսեռը կարելի է սեղմելով դուրս հանել պատյանից: Մեծ փականների համար խորհուրդ է տրվում օգտագործել լրացուցիչ տափօղակ և նիպել՝ սեղմված լծակը պահելու համար: Լծակը պետք է ձգված լինի այն կետում, որտեղ լծակի կունդը համընկնում է լիսեռի փորակավոր ծայրի հետ:

- E. Բաղադրիչներ, որոնք պետք է դուրս հանվեն լիսեռի հետ միասին (19). խցուկը (17), խցուկի տուևի օղակը (23 կամ 100), պահանգային փողակը (20) և վերին ուղղորդիչ ականոցը (21):

Ծանոթագրություն: Պահանգային փողակը (20) և վերին ուղղորդիչ ականոցը (21) կարող են մնալ պատյանի մեջ: Դրանք պետք է հանել: Պահանգային փողակը (20) կարելի է հանել՝ միայն դուրս քաշելով այն պատյանից կափարիչի կողմից: Վերին ուղղորդիչ ականոցը (21) կարելի է հրել պատյանի միջով՝ խցանը հանելուց հետո, կամ դուրս քաշել պատյանից կափարիչի կողմից: Սուսպենզիոն կամ մածուցիկ միջավայրում օգտագործելու համար նախատեսված փականների վրա վերին ուղղորդիչ ականոցն ունի ներքին պնդողակ (92) և արտաքին պնդողակ (93), իսկ ստորին ուղղորդիչ ականոցն ունի ներքին պնդողակ (95) և արտաքին պնդողակ (96) (տես նկար 4):



Նկար 4 - Լրացուցիչ պնդողակների տեղակայում

- F. Հանեք խցանը (4) պատյանի կողմից՝ թամբիկի օղակի հակառակ կողմից:
- G. Հանեք ստորին ուղղորդիչ ականոցը (22):

Ծանոթագրություն: Ավանոցի մեջ նախատեսված է ակոս՝ ականոցը պտուտակահանով դուրս հանելու համար: Եթե ականոցը դուրս է հանվում պտուտակահանով, ապա պետք է այն բարձրացնել երկու կողմից, որպեսզի այն հանելու ժամանակ կանխել խափանումը: Եթե ականոցը հեշտությամբ դուրս չի գալիս, ականոցի մեջ լցրեք թանձր քսուք, տեղադրեք լիսեռը (19) փականի մեջ՝ համոզվելով, որ լիսեռի մշակված մասը մտնում է ստորին ուղղորդիչ ականոցի մեջ: Փափուկ մուրճի օգնությամբ թեթևակի թակեք լիսեռի ծայրին, մինչև ականոցը մասնակի դուրս չգա: Հանեք լիսեռը և ամբողջությամբ դուրս հանեք ականոցը՝ հրելով այն հենվելով ակոսին պտուտակահանով:


ISE EN GARDE

Մի հրեք ականոցը՝ որպես լծակ օգտագործելով թամբիկը: Եթե ականոցը հեշտությամբ հանելու հնարավոր չէ, անցեք բաժին 8.3.1 և հանեք թամբիկի օղակի սևեռիչը և թամբիկի օղակը, այնուհետև հանեք ականոցը: Փափուկ կոլտի մի կտոր (արույր և այլն) տեղադրեք թամբիկի ներքին շրջուսիկի և ամբարձիչ հարմարանքի միջև, որպեսզի կանխեք պատյանի մեջ թամբիկի խցվածքի վնասումը:

8.3.1 Թամբիկի օղակի հանում (տես նկար 16)

Հետևյալ ընթացակարգերը ներկայացնում են թամբիկի օղակի սևեռիչը (3) մանեկադարձակի միջոցով հանելու առաջարկվող եղանակը: Baker Hughes ընկերությունն արտադրում և անվանական գնով իրացնում է Camflex II 1" - ից մինչև 4" (Դու 25-100) չափի փականների թամբիկի օղակի սևեռիչը հանելու համար մանեկադարձակներ: Խստորեն խորհուրդ է տրվում ձեռք բերել կամ պատրաստել մանեկադարձակներ՝ թամբիկի օղակի հեշտ հեռացման և հավաքման համար (2), քանի որ փականի հերմետիկ մեկուսացումը և պատշաճ աշխատանքն ապահովելու համար ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԿԵՆ ՈԼՈՐՄԱՆ ՄՈՄԵՆՏԻ ՀԱՏՈՒԿ ԱՐԺԵՔՆԵՐԸ:

Նկար 5-ում ներկայացված են առաջարկվող կոլտերը, դրանց հաստությունը և պատրաստման եղանակը, ինչպես նաև հատուկ չափերը՝ մանեկադարձակի արտադրությունը պարզեցնելու համար:



A = D.E. Dispositif de retenue de bague de siège
B = largeur de la fente dans le dispositif de retenue

Նկար 5

A. Ամրացրեք փականի պատյանը մամլակով կամ համապատասխան ամրացնող սարքով՝ թամբիկի օղակով դեպի վեր:

ISE EN GARDE

Պետք է զգույշ լինել, որպեսզի չվնասվի միջադիրի մակերեսը փականի պատյանի մեջ:

- B. Սևեռիչի դարձակը տեղադրեք այնպես, որ այն մտնի սևեռիչի բլթանցքների մեջ:
- C. Սևեռիչի դարձակը միացրեք հարվածային կամ համապատասխան մանեկադարձակ և թուլացրեք, այնուհետև հանեք սեռիչը (3)՝ պտտելով այն ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ:

Ծանոթագրություն: Camflex GR պատյանի կառուցվածքները պահանջում են երկարացուցիչի

կիրառում սևեռիչը հանելու համար՝ պատյանի ավելի երկար ձևի պատճառով:


D. Բարձրացրեք թամբիկի օղակը:

Ծանոթագրություն: Արտակարգ իրավիճակներում թամբիկի օղակի սևեռիչը հանելու համար կարելի է օգտագործել թափահանիչ: Ընդ որում, պետք է օգտագործել երկու թափահանիչ՝ տեղադրելով դրանք ակոսներում միմյանցից 180° անկյան տակ և հարվածել դրանց վրա միաժամանակ:

8.3.2 DVD-ի ապամոնտաժում (տես նկար 16)

Եթե Camflex-ը DVD տարբերակով է, մոդելի համարը 35x3x կամ 35x4x, DVD-ին տեղադրված է պատյանի մեջ: Խորհուրդ է տրվում օգտագործել DVD-ի դարձակներ այդ սարքը դուրս հանելու համար (105): Baker Hughes ընկերությունն արտադրում և անվանական գնով առաքում է Camflex II 1" - ից մինչև 12" (Դու 25300) չափի DVD-ին հանելու համար դարձակներ: Խստորեն խորհուրդ է տրվում ձեռք բերել կամ պատրաստել մանեկադարձակներ՝ DVD-ին հանելու համար (105), քանի որ DVD-ի թիթեղը պատշաճ կերպով ամրացնելու համար ՊԵՏՔ Է ՊԱՀՊԱՆԿԵՆ ՈԼՈՐՄԱՆ ՄՈՄԵՆՏԻ ՀԱՏՈՒԿ ԱՐԺԵՔՆԵՐԸ:

Նկար 6-ում ներկայացված են կոլտի առաջարկվող հաստությունը և պատրաստման եղանակը, ինչպես նաև հատուկ չափերը՝ դարձակի արտադրությունը պարզեցնելու համար:



Taille de la vanne	A Pouces (mm)	d Pouces (mm)	D Pouces (mm)	H Pouces (mm)	T Pouces (mm)
1" (DN 25)	1,063 (27)	0,142 (3.6)	1,236 (31.4)	0,079 (2)	0,4 (10)
1 1/2" (DN 40)	1,496 (38)	0,157 (4)	1,772 (45)	0,118 (3)	0,5 (12)
2" (DN 50)	1,929 (49)	0,157 (4)	2,205 (56)	0,118 (3)	0,7 (18)
3" (DN 80)	2,913 (74)	0,177 (4.5)	3,248 (82.5)	0,157 (4)	0,8 (20)
4" (DN 100)	3,858 (98)	0,197 (5)	4,213 (107)	0,275 (7)	0,8 (20)
6" (DN 150)	5,905 (150)	0,236 (6)	6,260 (159)	0,354 (9)	1,0 (25)
8" (DN 200)	7,913 (201)	0,236 (6)	8,268 (210)	0,394 (10)	1,0 (25)
10" (DN 250)	9,843 (250)	0,236 (6)	10,315 (262)	0,394 (10)	1,2 (30)
12" (DN 300)	11,732 (298)	0,276 (7)	12,204 (310)	0,472 (12)	1,2 (30)

Նկար 6

A. Ամրացրեք փականի պատյանը մամլակով կամ համապատասխան ամրացնող սարքով՝ խցանի կողմով դեպի վեր (տես նկար 16):

ISE EN GARDE

Պետք է զգույշ լինել, որպեսզի չվնասվի միջադիրի մակերեսը փականի պատյանի մեջ:

- B. DVD-ի թիթեղը հանելու համար դարձակը տեղադրեք այնպես, որ այն մտնի սևեռիչի բլթանցքների մեջ:
- C. Հարվածային կամ համապատասխան դարձակի օգնությամբ միացրեք պահող դարձակը և թուլացրեք, այնուհետև հանեք DVD-ին (105)՝ պտտելով ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ:

9. Տեխնիկական սպասարկում


9.1 Մեմբրանի փոխարինում (տես Նկարներ 16 և 17)

Camflex II մեմբրանային զսպանակային շարժաբերի առաջարկվող տեխնիկական սպասարկումը սահմանափակվում է մեմբրանի փոխարինմամբ (40): Շարժաբերը փականից հանել պետք չէ: Մեմբրանը փոխարինելու համար կատարեք հետևյալ գործողությունները.


ISE EN GARDE

Փականը պետք է մեկուսացված լինի, և դրանում չպետք է լինի աշխատանքային ճնշում: Փականի բաղադրիչներին էլեկտրական կամ օդի մատակարարման բոլոր գծերը պետք է անջատված լինեն: Ճնշումը շարժաբերի մեջ պետք է թուլացնել:


Թափանիվը (53) և սահմանափակիչը (77) պետք է հետ տարված լինեն, որպեսզի ապահովեն լծակի ազատ տեղաշարժը (34):



Քայլ A



Քայլ B



Քայլ C

Նկար 7 - եղանակ 1

- I-1. Կենտրոնացրեք և ամրացրեք մեմբրանը (40) միացի վերին մասին (43) (տես Նկար 7 - եղանակ 1, քայլ A):
- J-1. Ուղղեք մեմբրանը (40) զսպանակային գլանի մեջ (38) այնպես, որ այն մասամբ մտնի զսպանակային գլանի մեջ (տես Նկար 7 - եղանակ 1, քայլ B):

- A. Բացեք փականի բայպասը, փակեք մեկուսացնող փակող ծորակները և մեկուսացրեք փականը վերը նշված ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆԸ համապատասխան:
- B. Անջատեք և առանձնացրեք շարժաբերի օդի մատակարարման խողովակաշարը:
- C. Դուրս պտտեք դարձակամուտ գլխիկով չորս պտուտակները (41) մեմբրանի պատյանից (42) և հանեք մեմբրանի պատյանը:
- D. Հանեք մեմբրանը (40):

Ծանոթագրություն: Մեմբրանը ստանձված է միացի վերին մասին (43):

- E. Հանեք ժապավենը և սուսինձը միացի վերին մասից և լավ մաքրեք:
- F. Մաքրեք մեմբրանի պատյանը (42) և զսպանակային գլանը (38) մեմբրանի եզրի հետ շփման մասում վերահավաքման ժամանակ:

Ծանոթագրություն: Մեմբրանը տեղում պահելու համար միացի վրա օգտագործվում է ստանձե սկավառակ (սուսինձ երկու կողմից) կամ ռետինե սուսինձ: Ռետինե սուսինձ օգտագործելու դեպքում այն պետք է քսել ինչպես միացի, այնպես էլ մեմբրանի վրա կամ օգտագործվող ստանձի արտադրողի հրահանգներին համապատասխան: Առաջարկվող ստանձանյութերը ներկայացված են Նկար 15-ում:

Մեմբրանը փոխելու համար օգտագործեք հետևյալ երկու եղանակներից մեկը.

Եղանակ 1. Կետեր G-1 / H-1 / I-1 / J-1 / K-1

G-1. Կաշուն ժապավեն կամ սուսինձ քսեք միացի վերին մասում:

H-1. Մեմբրանի վրա (40) «Piston Side» («Միացի կողմ») գրառում կա: Եթե սուսինձ է օգտագործվում, քսեք այն մեմբրանի այդ կողմում:

ISE EN GARDE

Համոզվեք, որ դարձակամուտ գլխիկով պտուտակների անցքերը մեմբրանի պատյանում և զսպանակի գլանում հավասարեցված են՝ անցքերը հավասարեցնելիս մեմբրանի շեղումը կանխելու համար: Մեմբրանի պատյանը (42) սովորաբար հավաքվում է օդի մուտքի անցքի հետ, որը գտնվում է շարժաբերի ստորին մասում: Կախված պահանջվող տեղակայումից, այն կարող է տեղադրվել ցանկացած դիրքում զսպանակի գլանի շուրջ, ինչը թույլ է տալիս հավասարեցնել դարձակամուտ գլխիկով պտուտակների անցքերը: Այնուամենայնիվ, զսպանակային գլանի մեջ թափման անցքը միշտ պետք է ուղղված լինի դեպի ներքև, որպեսզի ապահովվել ցանկացած հեղուկի թափումը, որը կարող է լցվել զսպանակի պատյանի գլանի մեջ (38): Եթե փականն ունի ընտրովի ներփչման գիծ, ապա այդ գիծը պետք է անցնի հեղուկաթափ անցքի մեջ:


K-1 Տեղադրեք մեմբրանի եզրը (40) մեմբրանի պատյանի եզրից վեր (42) և զգուշությամբ հրեք մեմբրանի պատյանը (42) ներքև՝ դեպի միացը (43), մինչև այն դիպչի զսպանակային գլանին (38): (տես նկար 7 - եղանակ 1, քայլ C):

Հաջորդ քայլը կատարելու համար անցեք L կետին:

Եղանակ 2. Կետեր G-2 / H-2 / I-2 / J-2 / K-2

G-2. Մի շերտ նեոպրենի (կամ նմանատիպ) սոսինձ քսեք մեմբրանի եզրի և ներքին մակերեսի վրա (40), միացի վրա (43) և գլանի զսպանակի եզրի վրա (38):

Ճանաթագրություն: Միացի հետ շփվող՝ մեմբրանի



Նկար 7 - եղանակ

M. Միացրեք օդի մատակարարման գիծը մեմբրանի պատյանին (42):

N. Միացրեք օդի մատակարարումը և ստուգեք արտահոսքի առկայության առումով:

O. Անհրաժեշտության դեպքում տեղափոխեք թափանիվը (53) և սահմանափակիչը (77) (տարբերակ) ճիշտ տեղում և նորից շահագործման հանձնեք փականը:

9.2 Պատյանի հանգույցի ներքին մասեր

Camflex II փականի տեխնիկական սպասարկման ժամանակ

Ներքին մակերեսին գրված է «միացի կողմ», ուշադիր եղեք, որ նեոպրենի սոսնձի շերտը դուրս չգա միացի հարթ մասին համապատասխան սահմաններից (նկար 7 - եղանակ 1, քայլ A):

H-2. Կենտրոնացրեք և ամրացրեք մեմբրանը (40) միացին (43) (տես նկար 7 - եղանակ 2, քայլ A):

I-2. Չզույժ ուղղեք մեմբրանը (40) զսպանակային գլանի մեջ (38) այնպես, որ դրա եզրը մտնի զսպանակային գլանի ակոսի մեջ (38): Թեթևակի և հավասարաչափ սեղմեք մեմբրանի եզրին, որպեսզի սոսնձել նեոպրենի ծածկույթով երկու մասերը: Համոզվեք, որ մեմբրանը չի ոլորվել զսպանակային գլանի մեջ (նկար 7 - եղանակ 2, քայլ B):

J-2. Կարգավորեք մեմբրանի պատյանի դիրքը (42) զսպանակի գլանի նկատմամբ (38)՝ համոզվելով, որ օդի միացումը գտնվում է ճիշտ կողմում և մեմբրանի պատյանի պարուրակային անցքերը (42) ու զսպանակի գլանի անցքերը (38) համընկնում են:

Ճանաթագրություն: Օդի մատակարարման պարուրակային միացումը պետք է համընկնի զսպանակային գլանի մեջ օդափոխության անցքի հետ (38):

K-2. Սեղմեք մեմբրանի եզրը (40) մեմբրանի պատյանի (42) և զսպանակային գլանի եզրերի միջև (նկար 7 - եղանակ 2, քայլ C):

Հաջորդ քայլը կատարելու համար անցեք L կետին:

L. Համոզվեք, որ մեմբրանի պատյանը (42) ճիշտ է տեղադրված զսպանակի գլանի վրա (38), տեղադրեք դարձակամուտ գլխիկով չորս պտուտակներ (41) և հավասարաչափ ձգեք դրանք:

պետք է ստուգել բոլոր ներքին մասերը՝ դրանց մաշվածության, քայքայման և վնասվածքների առումով, հատկապես հետևյալ նեցուկային մակերևույթները.

- պատյանի և թամբիկի օղակի շփման մակերեսը:
- խցանի և թամբիկի օղակի նեցուկային մակերեսը:
- լիսեռի ուղղորդիչ մակերեսը և ուղղորդիչ ականոցը:


Բոլոր վնասված մասերը պետք է փոխարինվեն բնօրինակ պահեստամասերով:

9.2.1 Կոշտ թամբիկի հարմարեցում

Հարմարեցումը փականի ամրապնդիչ մասերը հղկող նյութով

հղկելու և միմյանց սեղմելու գործընթացն է՝ ամուր տեղավորումն ապահովելու համար: Հարմարեցումը կատարելու համար:

- A. Մաքրեք փականի պատյանի մեջ թամբիկի օղակի նեցուկային մակերեսը և թամբիկի օղակի շրջուսիկը:
- B. Փոքր քանակությամբ մանրահատիկ հղկման միացություն քսեք թամբիկի օղակի շրջուսիկի վրա:



Նկար 8

- C. Տեղադրեք թամբիկի օղակը պատյանի մեջ և հարմարեցրեք թեթևակի շարժումներով՝ պտտելով թամբիկի օղակը պատյանի մեջ և հետևելով, որպեսզի հարմարեցումը կատարվի փականի պատյանի մեջ թամբիկի օղակի ամբողջ նեցուկային մակերեսի համար: Ուժով մի պտտեք օղակը նույն տեղում:

Ծանոթագրություն: Նկար 8-ում ցուցադրված է մի պարզ գործիք, որը կարող է պատրաստվել փոքր չափի փականների վրա հարմարեցման գործողությունը պարզեցնելու համար:

- D. Հանեք թամբիկի օղակը և մանրակրկիտ մաքրեք այն:
- E. Տեղադրեք թամբիկի օղակը հարթ մակերեսի վրա՝ նեցուկային կողմով դեպի վեր:
- F. Փոքր քանակությամբ հղկման միացություն քսեք թամբիկի օղակի նեցուկային մակերեսի վրա:
- G. Թեթևակի շարժումներով հարմարեցրեք խցանը թամբիկի օղակին՝ պտտելով և թեքելով խցանը բոլոր ուղղություններով:
- H. Լավ մաքրեք թամբիկի օղակը, խցանը և պատյանի փականը՝ նախապատրաստելով դրանք վերահավաքման:

9.2.2 Փափուկ թամբիկ

Մի հարմարեցրեք փափուկ թամբիկի օղակը խցանին՝ թամբիկի օղակը պետք է հարմարեցվի փականի պատյանին: Թամբիկի օղակի հարմարեցման ընթացակարգը նույնն է, ինչ ընթացակարգը, որը նշված է 9.2.1 «Կոշտ թամբիկ» բաժնի A-D կետերում:

9.3 Լայնակի հանգույցը (տես նկարներ 16 և 17)

Լայնակի պահանջվող տեխնիկական սպասարկումը (33) սահմանափակվում է ականոցի (12) և լիսեռի առանցքակալի (8) փոխարինմամբ: Այս մասերից որևէ մեկը փոխարինելու համար շարժաբեքը պետք է առանձնացվի պատյանից: (Տես համապատասխան բաժնի՝ կախված օգտագործվող շարժաբեքի տեսակից): Տեղադրեք ականոցը լայնակի մեջ՝ ականոցի խորացված մասով դեպի լիսեռի առանցքակալի կողմը: Լիսեռի ականոցը (8) ազատ նստեցվածք ունի լայնակի վրա և հանվում է ականոցի կողմ հրելիս:

ISE EN GARDE

Համոզվեք, որ լայնակի մեջ առանցքակալի բնիկը մաքուր է: Առանցքակալը պետք է հեշտությամբ սափի: Առանցքակալը հրելու համար չափազանց ուժ մի գործադրեք:

10. Վերահավաքման ընթացակարգեր

10.1 Մեմբրանային զսպանակային շարժաբեք

Շարժաբեքը 8.2 բաժնի հրահանգներին համապատասխան քանդելուց հետո՝ կրկնակի հավաքման համար կատարեք հետևյալ գործողությունները.

- A. Տեղադրեք զսպանակը (39) միացի մեջ (43):
 - B. Տեղադրեք տափօղակը (44) և սևեռամանեկը (45):
- Ծանոթագրություն:** սևեռամանեկը (45) պետք է պարուրակ ունենա ամբողջ երկայնքով:
- C. Մեմբրանի և դրա վերին պատյանի հավաքման համար տես բաժնի 9.1, քայլեր E.-ից մինչև L.:
 - D. Տեղադրեք սևեռամանեկը (46) և պահանգը (35):
 - E. Որոշեք ճիշտ կողմնորոշումը և տեղադրեք շարժաբեքը լայնակի վրա, տեղադրեք սևեռիչ տափօղակները (37), դարձակամուտ գլխիկով պտուտակները (36) և ամուր ձգեք դրանք:
 - F. Շարժաբեքի գլանաձողի կարգավորումը տես բաժնի 11-ում:

10.2 Պատյանի ենթահանգույցի վրա գտնվող մեմբրանային զսպանակային շարժաբեք (տես նկարներ 16 և 17)

Պահանջվող տեխնիկական սպասարկումը կամ հավաքված վիճակում փականի, շարժաբեքի և լայնակի փոխարինումն ավարտելուց հետո վերահավաքումը կատարեք հետևյալ կերպ.

- A. Որոշեք փականի ճիշտ կողմնորոշումը շարժաբեքի նկատմամբ:
- B. Անհրաժեշտության դեպքում տեղափոխեք պատյանի գամասեղները (28) և խցուկի կցաշուրթի գամասեղները (13):

Ծանոթագրություն: Կախված շարժաբեքի դիրքից՝ համոզվեք, որ պատյանի գամասեղները (կարճ գամասեղները) լայնակի անցքով տեղադրելիս տեղակայված կլինեն լայնակի առջևի մասում՝ դրանց հեշտ հասանելիությունն ապահովելու համար:

- C. Տեղադրեք ականոցը (12) և լիսեռի առանցքակալը (8) լայնակի մեջ: Լիսեռն այնպես պտտեք, որ խցանը հայտնվի փակ վիճակում:
- D. Փականի լիսեռն մասամբ մոցրեք լայնակի ստորին անցքի մեջ՝ բավականաչափ տեղ թողնելով խցուկի կցաշուրթը (14) լիսեռի վրա (19) տեղավորելու համար:

Ծանոթագրություն: խցուկի կցաշուրթը (14) տեղադրվում է լիսեռի վրա (19) այնպես, որ գոգավոր կողմը ուղղված լինի դեպի փականի խցուկը (17):

- E. Համոզվեք, որ խցուկի կցաշուրթի ակունները (14) համընկնում են խցուկի կցաշուրթի գամասեղների հետ

(13):


- F. Խցուկի կցաշուրթը լիսեռի վրա տեղադրելով, շարունակեք մտցնել փականի լիսեռը լայնակի մեջ (33) ականոցի միջով (12), որը տեղադրված է լայնակի մեջ (33):
- G. Տեղադրեք լծակը (34) լայնակի մեջ և համատեղեք այն լիսեռի հետ այնպես, որ լծակի լիսեռի անցքի կողմի ելունն ուղղված լինի դեպի լիսեռի առանցքակալը (8), և միացրեք լիսեռը լծակի փորակների հետ:

Ծանոթագրություն: *Լիսեռը պետք է կարթվի լծակի հետ այնպես, որ ստուգիչ նշանը (կետը) պահանգի բույթի վրա՝ լծակի անցքի մեջ տեղադրման ժամանակ, ցույց տա, որ փականը փակ է: Ժամանակավոր տեղադրեք պահանգի բույթը լծակի մեջ (34) և ստուգեք ստուգիչ կետի համընկնելը: Կետը պետք է գտնվի փակման ցուցիչի գծի հենց սկզբում՝ առջևի կափարիչի վրա (32) (տես նկար 18). Եթե կողմնորոշումը չի փոխվել, հավասարեցրեք լծակը և նշեք դիրքը լայնակի վրա, ապա ստուգեք հավասարեցումը: (Տես նկար 17):*


ISE EN GARDE

Մի օգտագործեք օդի ճնշումը հավասարեցումը ստուգելու համար, քանի որ նորմալ աշխատանքի և օդի ամբողջական ճնշման դեպքում ցուցիչը կարող է գերազանցել կափարիչի վրա փակ դիրքի նշանը: Դա ընդունելի է:

- H. Ամբողջությամբ մտցրեք լիսեռը լծակի միջով՝ լիսեռի առանցքակալի հետ միանալու համար (8): Այժմ լայնակը պետք է ամբողջությամբ ամրացված լինի փականի կափարիչի կցաշուրթի վրա:
- I. Տեղադրեք և ձգեք պատյանի գամասեղների մանեկները (27):
- J. Տեղադրեք խցուկի կցաշուրթի գամասեղների մանեկները (94) և ձգեք միայն ձեռքով:
- K. Տեղափոխեք լծակը (34) լիսեռի վրա (19) փականի ուղղությամբ և ձգեք լծակի դարձակամուտ գլխիկով պտուտակը (49):
